



ՀՅԴ Երիտասարդականի «Դէպի Սիւնիք» Ռազմավարական
համապարփակ ծրագրի նախաձեռնություններէն՝

«ԱԶԱՏ ՍԻՒՆԻՔ»

Յօդուածաշար





Վտանգուած Սիւնիքը՝ Հ.Յ.Դ. Երիտասարդականի Ուշադրութեան Կեդրոնը

Հայաստանի Հանրապետութեան ողնաշարը հանդիսացող Սիւնիքի մարզը հայրենիքի անբաժանելի մասը ըլլալէ բացի՝ ունի շատ կարեւոր աշխարհագրական դիրք եւ ռազմավարական նշանակութիւն: Սիւնիքը միակ փուշն է, որ կը մնայ Թուրք-Ազրպէյճանական դաշինքին կոկորդը՝ խափանելով անոնց 100_ամեայ երազանքի՝ փանթուրքական ծրագրի իրագործումը:

Սիւնիքը փաստացիօրէն միակ խոչընդոտն է թրքական աշխարհի միաւորման ծրագրին, հետեւաբար անոր հզօրացումը պէտք է ըլլայ բոլորիս առաջնահերթութիւններէն, մանաւանդ, որ անոր անկումը կը յանգեցնէ Հայաստանի պետականութեան փլուզման եւ հայ ազգի վերջնական հայրենազրկման:

Հ.Յ.Դ. Երիտասարդութիւնը, առանց հատուածագատումի, միշտ իր ուշադրութեան կեդրոնը պահած է հայրենիքը, որպէս մէկ ամբողջութիւն: Յաւրթ, այսօրուան իրավիճակն ու կացութիւնը հաշուի առնելով, Սիւնիքը առանձնայատուկ ուշադրութեան արժանացած է Հ.Յ.Դ. աշխարհասփիւռ Երիտասարդական կառոյցին կողմէ:

Դաշնակցական երիտասարդութիւնը իր ողջ կարողականութեամբ լծուած է Սիւնիքի դիմադրողականութեան բարձրացման աշխատանքին, յատկապէս Սիւնեցի երիտասարդութիւնը կազմակերպելու եւ վերապատրաստելու գործին՝ դիմակայելու համար բոլոր դժուարութիւններն ու մարտահրաւերները:

Սպարապետ Գարեգին Նժդեհի ղեկավարութեամբ մղուած Զանգեզուրի ինքնապաշտպանական մարտերը ունեցած են յոյժ կարեւոր նշանակութիւն: Անոնք մղուած են սպարապետի հետեւեալ համոզումով.

«Իրաւունքը ուժի հասկացողութիւն է, այլ ո՛չ տրամաբանութեան»:

Այս մօտեցումով մղուած պայքարի շնորհիւ է, որ Զանգեզուրը (այսօրուան Սիւնիքը) մաս կը կազմէ այսօրուան Հայաստանին: Այսօր, հայ երիտասարդութիւնը նոյն ոգիով պարտաւոր է ապահովել Սիւնիքի անվտանգութիւնն ու անոր պաշտպանութիւնը:

Հ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակ

Պետության բնորոշ կարևորագույն յատկանիշներից մէկը պետական տարածքն է, աշխարհագրական այն հատուածը, որի վրայ տարածւում է պետության ինքնիշխանութիւնը:

Տարածքային առումով պետութիւններին կարելի է համեմատել մարդու մարմնի հետ, ինչպէս մարմնի, այնպէս էլ պետական տարածքների դէպքում կարելոր է իւրաքանչիւր բջիջը եւ սանթիմէթըրը: Սակայն ինչպէս մարմնի դէպքում կան կենսական նշանակութեան օրգաններ, առանց որոնց անհնար է մարդու կենսագործունէութիւնը, նոյնպէս եւ պետական տարածքի դէպքում կան ռազմավարական նշանակութեան տարածքներ, առանց որոնց ոչ միայն խաթարւում է պետական տարածքի ամբողջականութիւնը, այլեւ պետութիւնները զրկւում են զարգացման հնարաւորութիւններից եւ դատապարտւում կործանման:

Հայաստանի երրորդ Հանրապետութեան պարագայում ռազմավարական նշանակութեան տարածքն, անշուշտ, Սիւնիքն է, որ ոչ միայն մշտապէս պատմական բացառիկ դերակատարութիւն է ունեցել հայ ժողովրդի կեանքում, այլեւ այսօր էլ հանդիսանում է Հայաստանի եւ ողջ հայութեան համար պահպանման եւ զարգացման գրաւականներից մէկը:

Առանց Սիւնիքի Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը և յարատւումն անհնարին է:

Այս պարզ արձանագրումից ակնհայտ է Սիւնիքի մարզի նշանակութիւնը համայն հայութեան համար:

Իւրաքանչիւր պետութեան եւ ազգի գոյութեան ու յարատւման հարցում ամենաշահագրգռուած շերտը մշտապէս այդ ազգի երիտասարդութիւնն է, քանզի պետութեան գոյութեան պայմաններում, որ հնարաւոր է ազգային երիտասարդութեան բնականոն եւ բեղմնաւոր գործունէութիւնը:

Հէնց այս համատեքստում էլ պէտք է պատկերացնել Սիւնիքի կարեւորութիւնը ժամանակակից հայ երիտասարդի կեանքում:

Որպէս Հայաստանում ապրող երիտասարդութեան շրջանում գործող կառոյց, որը նպատակ ունի ազգասէր երիտասարդների միջոցով ծառայել հայրենիքին, Հ.Յ.Դ. Հայաստանի երիտասարդական միութիւնը մշտապէս ուշադրութեան կենդրոնում է պահել Հայաստանի բոլոր մարզերի խնդիրները:

2020 թ. աղէտալի պատերազմից յետոյ, գիտակցելով ողջ հայ ժողովրդի համար ուժգնացած մարտահրաւերների յաղթահարման անհրաժեշտութիւնը եւ սեփական յանձնառութիւնն այդ գործում, ինչպէս նաեւ ըմբռնելով թշնամական հայեացքների կիզակէտում յայտնուած Սիւնիքի հզօրացման կարեւորութիւնը պատմական այս ժամանակաշրջանում, Հ.Յ.Դ. Հայաստանի երիտասարդական միութիւնն առանձնապատուկ ուժեր կենդրոնացրեց Սիւնիքի մարզում երիտասարդական ծրագրերի իրականացման եւ պատմական հայրենիքի այս ռազմավարական նշանակութեան հատուածի հզօրացման նպատակով:

Հ.Յ.Դ. Հայաստանի երիտասարդական Միութիւն

Հայաստանի Հանրապետության

ՄԻՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տարածքը	4506 քառ. թմ
ՀՀ տարածքի մեջ մարզի տարածքի տեսակարար կշիռը	15.1%
Համայնքներ, 2019թ. տարեկգբի դրությամբ	8
Քաղաքներ	7
Գիւղեր	131
Բնակչության թուաքանակը 2019 թ. տարեկիզբի դրությամբ	137.6 հազ. մ
քաղաքային	93.4 հազ. մ
գիւղական	44.2 հազ. մ
ՀՀ բնակչության ընդհանուր թուաքանակի մեջ մարզի բնակչության թիւի տեսակարար կշիռը, 2018 թ.	4.6%
Քաղաքային Բնակչության թիւ տեսակարար կշիռը, 2018թ.	67.9%
Գիւղատնտեսական նշանակութեան հողեր	306,378.5 հա

Մինիքի մարզը կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան տարածքի հարաւային կողմը: Մարզը հիւսիսէն սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարաւէն՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարութիւնը 42 քմ. է), արեւմուտքէն՝ Նախիջեւանին եւ արեւելքէն՝ Արցախին:



Տեսարժան վայրեր

Վահանավանք



Տաթևի վանք

Մարզի ամենագրաւիչ վայրերէն մէկը հայկական միջնադարեան ճարտարապետութեան յուշարձան Տաթևի վանական համալիրն է (Թ. դար), ուր 1390-1435 թթ. գործած է Տաթևի նշանաւոր համալսարանը:

Տաթևեր ճոպանուղի

2010-ին շահագործման յանձնուած է 5.7 քմ. երկարութեամբ աշխարհի ամենաերկար «Տաթևեր» ճոպանուղին (առաւելագոյն բարձրութիւնը 380 մ.), որ կ'անցնի Որոտան գետի կիրճով, կը ձգուի սարերու վրայ եւ Հալիճոր գիղէն կը հասնի Տաթևի վանական համալիր:

Խնձորեսկի կամուրջ

2012-ին գործարկուած է Հին Խնձորեսկի երկուծորափը (Ղանդունցնովն ու Ներքին Թաղը) իրար միացնող իր տեսակի ու չափի մէջ եզակի կախովի կամուրջը: Կամուրջը հսկայ ձորի մէկ ափէն միւսը կը ձգուի աւելի քան 160 մ.: Բարձրութեան ամենախորունկ տեղը 63 մ. է: Կամուրջի բանուկ զանգուածը կախուած է ամուր ու ձիգ ճոպաններէն (կախովի կամուրջ), որուն պատճառով քալելու ընթացքին



կամուրջը կը ճօճուի, հետեւաբար ժողովուրդը գայն անուանած է «ճօճուող կամուրջ»:

Շաքիի ջրվեժ

Սիսիան քաղաքէն 6 քմ. հեռաւորութեան վրայ կը գտնուի Շաքիի ջրվեժը՝ Փոքր Կովկասի լեռներու ամենախոշոր ջրվեժը (բարձրութիւնը 18 մ.):



Զօրաց քարեր

Մարզի պատմամշակութային յուշարձաններու մէջ յայտնիներէն են «Զօրաց քարեր» յուշարձանախումբը, Բաղաբերդի, Հալիճորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնայ, Բղենու վանքերը, Վահանայ վանքի եւ Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային յուշարձանը, Սիսիանի Նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Մեղրի քաղաքի Փոքր Թաղի եկեղեցին եւ քաղաքի պաշտպանական նշանակութեան աշտարակները:



Սիսիան քաղաքէն 3.2 քմ. դէպի հիւսիս կը գտնի «Զօրաց քարեր» յուշարձանախումբը, որ յայտնի է Նաեւ Քարահունջ անունով: Այն մէգալիթեան դարաշրջանի (Ք.ա. Բ. հազարամեակ) ծնունդ է: «Զօրաց քարեր»ը կը հանդիսանան աշխարհի մէջ յայտնի հնագոյն մէգալիթիկ համալիրներէն եւ աստղադիտարաններէն մէկը, հնդեւրոպական քաղաքակրթութեան քարեդարեան վկայարան, որուն գաղտնիքները դեռ բացայայտուած չեն գիտութեան կողմէ: «Զօրաց քարեր»ը յաճախ կ'անուանեն «Armenian Stonehenge»՝ նկատի ունենալով, որ ուսումնասիրողներու կարծիքով այստեղ եւս առկայ է մէգալիթիկ աստղադիտարան:

Քաղաքներ

Կապան քաղաքը (2019-ի տարեսկիզբին՝ 42.3 հազ. մարդ) կը գտնուի Խուստուփ լեռան ստորոտին (3201 մ), Երեւանէն 301 քմ. հեռավորութեան վրայ: Տնտեսութեան զարգացած ոլորտը արդիւնաբերութիւնն է, ընդհանուր ծաւալի գերակշռող հանքարդիւնաբերութիւնը:

Քաջարան քաղաքը (2019-ի տարեսկիզբին՝ 7.0 հազ. մարդ) կը գտնուի Երեւանէն 326 քմ. հեռավորութեան վրայ: ՀՀ գունաւոր մետաղագործութեան կեդրոնն է՝ պղինձի եւ մոլիբդենի հզօր հումքային աղբիւր հանդիսացող հազուագիւտ հանքավայրի շահագործման հիման վրայ:

Տնտեսութեան հիմնական եւ զարգացած ճիւղը հանքարդիւնաբերութիւնն է:

Գորիս քաղաքը (2019-ի տարեսկիզբին՝ 20.3 հազ. մարդ) կը գտնուի Երեւանէն 236 քմ. հեռավորութեան, տնտեսութեան հիմնական ճիւղը արդիւնաբերութիւնն է: Զարգացած են էլեկտրականութեան արտադրութիւնը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակներու, կարի, ալիւմինէ եւ մետաղապլաստիկ իրերու, բնափայտի մշակման ու փայտէ արտադրատեսակներու եւ էլեկտրական սարքաւորանքի արտադրութիւնները:

Սիսիան քաղաքը (2019-ի տարեսկիզբին՝ 14.8 հազ. մարդ) կը գտնուի Երեւանէն 201 քմ. հեռավորութեան վրայ, տնտեսութեան ծաւալի գերակշռող էլեկտրականութեան արտադրութիւնն է,

որոշակի տեսակարար կշիռ ունին նաեւ ոչ մետաղական հանքային արտադրատեսակներու եւ սննդամթերքի արտադրութիւնները:



Դաստակերտ քաղաքը (2019-ի տարեսկիզբին՝ 0.3 հազ. մարդ) կը գտնուի Երեւանէն 221 քմ. հեռավորութեան վրայ: Աշխատանքներ կը տարուին պղինձի եւ մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Մեղրի քաղաքը (2019-ի տարեսկիզբին՝ 4.5 հազ. մարդ) կը գտնուի Երեւանէն 376 քմ. հեռավորութեան վրայ, տնտեսութեան ընդհանուր ծաւալի մէջ գերակշռող մշակող արդիւնաբերութիւնն է: Որոշակի տեսակարար կշիռ ունին էլեկտրականութիւնը եւ միրգերու, պահածոներու եւ հիւթերու արտադրութիւնը:

Ագարակ քաղաքը (2019-ի տարեսկիզբին՝ 4.2 հազ. մարդ) կը գտնուի Երեւանէն 388 քմ. հեռավորութեան վրայ, տնտեսութեան առաջնակարգ ոլորտը հանքարդիւնաբերութիւնն է, որմէ կարեւորագոյնը գունաւոր մետաղներու արդիւնահանումն է: Քաղաքի տնտեսութեան զարգացումը կապուած է պղնձամոլիբդենային արտադրութեան հետ: Ագարակի մէջ կը գտնուին Հայաստան-Իրան սահմանային մաքսակէտերը:

Լեռնահայաստանի Հերոսամարտը

Հայաստանի հանրապետության հռչակումէն ետք, 1918-ի վերջաւորութեան, Նժդեհ ՅՅ կառավարութեան կողմէ կը նշանակուի Նախիջեանի գաւառապետ, իսկ Օգոստոս 1919-էն՝ Կապանի, Արեւիքի եւ Գողթանի (Կապարգողթ) ընդհանուր հրամանատար:

Առանց արտաքին օժանդակութեան, ապաւինած հայրենի լեռներուն ու անձնական ոգիի զօրութեան, Սիւնիքի հայութիւնը, Նժդեհի ղեկավարութեամբ, կը վարէ իր յաղթական դիւցազնամարտը:

Այդ ծանր օրերուն է, որ Նժդեհ կը յղանայ եւ ի գործ կը դնէ Դաւիթ Բէկեան Ուխտերը: 25 Օգոստոս 1920-ին, Կապանի Կաւարտ գիւղի եկեղեցւոյ մէջ, Նժդեհի զինուորները կ'ուխտեն Դաւիթ Բէկի անունով «հաւատարիմ մնալ հայրենի երկրի ազատութեան, իրենց հրամանատար Նժդեհին եւ կռուիլ մինչեւ վերջին շունչը»: Այսպէս ծնունդ կ'առնեն Դաւիթ Բէկեան Ուխտերը, որոնց նշանաբանն էր «Յանուն հայրենիքի՝ Դաւիթ Բէկեան»: Դաւիթ Բէկեան Ուխտերուն օրինակով էր, որ Նժդեհ հետագային կը հիմնադրէ Յեղակոս Ուխտերը:

Բացայայտելով թուրք-պոլշեիկեան միացեալ դաւադրութիւնը՝ Սիւնիք կը շարունակէ կռիւր եւ Հայաստանի խորհրդայնացումէն ետք՝ 25 Դեկտեմբեր 1920-ին, Տաթևի վանքին մէջ կայացած համազանգեզուրեան առաջին համագումարին ինքզինք ինքնավար կը հռչակէ:

Նոյնիսկ Փետրուարեան ապստամբութեան պարտութիւնը եւ անոր հետեւանքով 12 հազար գաղթականութեան (որոնցմէ 4 հազարը զօրք) Նահանջը, որ զգալիօրէն կ'ազդեն լեռնահայութեան բարոյահոգեբանական վիճակին վրայ, չեն ընկճեր Սիւնիքը եւ ան կը շարունակէ իր յաղթական կռիւները: 26 Ապրիլ 1921-ին կը հռչակուի Լեռնահայաստանի Հանրապետութիւնը՝ սպարապետ Նժդեհի վարչապետութեամբ:

1 Յունիսին, ՅՅ կառավարութեան Նախաձեռնութեամբ, Լեռնահայաստանը կը յայտարարուի Հայաստան՝ Սիմոն Վրացեանը նշանակելով վարչապետ (Նժդեհ կը մնայ սպարապետ):

Այս պայմաններուն մէջ մէկ կողմէն Վրաստանի ու Հայաստանի պոլշեիկացումը, Արարատեան գաղթականութեան դէպի Սիւնիք Նահանջը, որ բարոյալքիչ ու յոռի ազդեցութիւն կ'ունենան լեռնաշխարհի հայութեան վրայ, միւս կողմէն պարէնի ու հացահատիկի չգոյութիւնը, վարչական եւ զինուորական մարմիններու միջեւ յառաջացած անհամաձայնութիւնները պատճառ կը դառնան, որ Յունիսին Լեռնահայաստան տեղի տայ խորհրդայնացման:

Այս մէկը հաստատուեցաւ Նաեւ խուսափելու համար աւելորդ հալածանքներէ, որուն կրնար ենթարկուիլ Խորհրդային Հայաստանի հայութիւնը Նաեւ հաշուի առնելով, որ Հայաստանի պոլշեիկեան ղեկավարութիւնը իր Յունիս 1921-ի հռչակագիրով Սիւնիքը կը համարէր Հայաստանի կցուած:

Զանգեզուրէն հեռանալէ առաջ Նժդեհ կը հաւաստիացնէ լեռնահայութեան, որ ինք վերջնականապէս չէ որ կը հեռանայ, այլ պիտի վերադառնայ:

Երկու տարուան կռիւներու ընթացքին թշնամիի 15 հազար սպանուածներուն դիմաց Սիւնիքը կու տայ 28 զոհ, իսկ շուրջ 200 գիւղեր կը մաքրագործուին թուրքերէն ու կը վերադարձուին հայերուն:

Ծնորհիւ Լեռնահայաստանի հերոսամարտին կարելի կ'ըլլայ.

- ա. Փրկել լեռնահայութիւնը կոտորածէն:
- բ. Սիւնիքը կցել Մայր հայրենիքին՝ մահացու անդամահատումէն զերծ պահելով Հայաստանը:
- գ. Ապահովել հայ մտաւորականութեան եւ մարտական ուժերու Նահանջն ու անցումը Պարսկաստան:

Գարեգին Նժդեհ

Ռազմաքաղաքական, պետական գործիչ, «Յեղակրոն» ազգային գաղափարախօսության հիմնադիր, Զ.Յ.Դ.-ի անդամ, Հայաստանի առաջին հանրապետության ռազմական և պետական գործիչ, Լեռնահայաստանի հանրապետության առաջնորդ, թրքական և ռուսական զինուած ուժերու դեմ տեղի ունեցած շարք մը պատերազմներու գործօն մասնակից:

Բուն անունով Գարեգին Տէր Յարութիւնեան, ծնած է 1 Յունուար 1881-ին, Նախիջեան գաւառի Կզնուտ գիւղի մէջ (այժմ Ազրայէյճանի տարածքին մէջ):

Հայրը Կզնուտի հոգեւորական Տէր Սահակ Տէր Յարութիւնեանի որդի Եղիշէն էր, մայրը՝ Նոյն գիւղէն՝ Տիրուհի Կիւնազարեան: Անոնց ամուսնութենէն ծնած են չորս երեխայ. երկու աղջիկ՝ Անիկն ու Յոլիկն և երկու տղայ՝ Լեւոնն ու Գարեգինը:

1888-ին, երբ երեխաներէն աւագը՝ Անիկը 11 տարեկան էր, իսկ կրտսերը՝ Գարեգինը երկու տարեկան, կը մահանայ ընտանիքի հայրը և երեխաները կը մեծցնէ մայրը:

Սկզբնական կրթութիւնը կը ստանայ տեղի ծխական հայկական դպրոցին մէջ, որուն փակուելէն ետք՝ Նախիջեանի ռուսական դպրոցէն Ներս, ապա ուսումը կը շարունակէ Թիֆլիսի ռուսական ուսումնական հաստատութեան մէջ:

17 տարեկանէն կը միանայ հայ ազատագրական շարժման: Կը Մեկնի Ս. Փեթերպուրկ իրաւաբանութիւն ուսանելու, սակայն երկու տարի ետք ուսումը կիսատ ձգելով ամբողջովին կը նուիրուի հայ յեղափոխութեան գործին: 1906-ին կը մեկնի Պուլկարիա, ուր Ռոստոմի աջակցութեամբ և մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարներու միանորոգութեամբ կ'ընդունուի Սոֆիայի սպայական դպրոցը և յաջողութեամբ կ'աւարտէ: 1907-ին կը վերադառնայ Հայաստան:

1909-ին գէնք և ռազմամթերք տեղափոխելու համար Նժդեհը կը վերադառնայ Կովկաս և կը ձերբակալուի ցարական իշխանութիւններու կողմէ: Աւելի քան երեք տարի բանտերու մէջ մնալէն ետք կը մեկնի Պուլկարիա:

1912-ին, երբ սկսած էր Պալքանեան առաջին պատերազմը, հայերը Թուրքիոյ դեմ կռուելու համար պուլկարական բանակի կողքին կը ստեղծեն կամաւորական վաշտ, որուն ղեկավարները կ'ըլլան Նժդեհն ու Անդրանիկ Օզանեանը: Նժդեհը պատերազմի ժամանակ կը վիրաւորուի: Առաջին աշխարհամարտի նախօրեակին ցարական կառավարութեան կողմէ ներման արժանանալով կը վերադառնայ Կովկաս՝ Թուրքիոյ դեմ մղուելիք պատերազմին մասնակցելու պայմանով: Պատերազմի սկզբնական շրջանին հայկական կամաւորական երկրորդ գունդի փոխհրամանատար, ապա հայ-եզդիական առանձին զօրամասի հրամանատար կ'ըլլան:

1915-ին, 563 հրամանագրով, Նժդեհ կը ստանայ ցարական բանակի հրամանատարի կոչում:

1917-ին ան սակաւաթիւ ուժերով կը հասնի Կողբ ու տեղի հայութիւնը կը փրկէ կոտորածէն: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներուն ըլլալով զօրավար Դրոյի օգնականը, 1918-ին գարնան կը վարէ Ալաջայի բնակավայր Անիի շրջակայքի կռիւները և հնարաւորութիւն կը ստեղծէ նահանջող հայկական զօրամասերուն անկորուստ Ալեքսանդրապոլ անցնելուն, միաժամանակ կ'ապահովէ Նիկողայոս Մառի պեղումներու արդիւնքը հանդիսացող Անիի արժեքաւոր հնութիւններու փոխադրումը:

1918-ի Մայիսին, երբ կը վճռուէր հայոց ճակատագիրը, Ալեքսանդրապոլի մէջ թրքական զօրքերուն դեմ կռուի բռնուելով Նժդեհ իր խումբով կը նահանջէ Վանաձոր (Ղարաքիլիսա): Այստեղ նահանջած ու խուճապի մատնուած էին բազմահազար հայ փախստականներ, տեղի ժողովուրդը նոյնպէս տագնապի մէջ էր: Սակայն Նժդեհի գլխաւորութեամբ իրականցուող Ղարաքիլիսէի եռօրեայ հերոսամարտով հայութիւնը կը հաստատէ իր յարատեւելու կամքը և այդ հաւաքական կամքի զօրացման գործին մէջ անուրանալի կ'ըլլայ

Նժդեհի դերը: Ղարաքիլիսէի մէջ վարած կռիւներուն համար (որոնց ընթացքին կը վիրաւորուի) կ'արժանանայ քաջութեան ամենաբարձր շքանշանին:

Յայաստանի Յանրապետութեան հռչակումէն ետք՝ 1918 թուականի վերջաւորութեան, Նժդեհը ՀՀ կառավարութեան կողմէ կը նշանակուի Նախիջեանի գաւառապետ, իսկ 1919-ի Օգոստոսէն՝ Կապանի, Արեւիքի եւ Գողթանի ընդհանուր հրամանատար:

1920-ին, երբ Գարեգին արդէն արտասահման կ'ապրէր, իսկ Յայաստանի մէջ իշխանութեան գլուխ եկած էին պոլշեիկները, անոր մայրն ու եղբայրը՝ Լեւոնը կ'աքսորուին Սիպիր: Երեք տարի անց անոնց կը թոյլատրուի վերադառնալ Վլադիկավկազ:

Կասկածելով Գերմանիոյ հետ գաղտնի կապեր ունենալու մէջ՝ 1944 թուականի Յոկտեմբերի վերջերը Նժդեհ կը ձերբակալուի: Չինք կը տեղափոխեն Պուխարեստ, այնտեղէն Մոսկուա եւ կը բանտարկեն Լիբեանկա բանտին մէջ:

1946-ին Նոյեմբերին Նժդեհը Մոսկուայէն կ'ուղարեն Երեւան, ուր դատաքննութիւնը կ'աւարտի 1948-ին. Նժդեհը կը դատապարտուի 25 տարուան բանտարկութեան:

Նժդեհի ձերբակալութենէն ետք անոր ընտանիքը (կինը եւ որդին) Սոֆիայէն կ'աքսորուին Պուլկարիոյ Պալիկենի քաղաք:

Նժդեհի որդին՝ Սուքիաս-Վրէժ Նժդեհը ապրած է Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ, զուակ չէ ունեցած: Վրէժ անունով զինք կոչած է հայրը, իսկ հօր ձերբակալութենէն ետք Վրէժի ճակատագրով մտահոգ մայրը անոր անուան վրայ աւելցուցած է Նժդեհ անունը:

21 Դեկտեմբեր 1955-ին, Գարեգին Նժդեհ կը մահանայ Վլադիմիրի կեդրոնական բանտին մէջ:

Սիւնիքի Ռազմավարական Նշանակութիւնը և «Միջանցքներու» ճակատամարտը

Սիւնիքի Ռազմավարական Արժէքը

Պատմութեան ընթացքին Սիւնիքի մարզը առանցքային դեր խաղացած է Յայաստանի պատմութեան մէջ: Սիւնիքի ազնուական հայ ընտանիքներու տեսլականն էր վերականգնել հայկական թագաւորութիւնը եւ դիմադրել օսմանեան ու թաթարական արշաւանքներուն: Դարձեալ Սիւնիքի եւ Ղարաբաղի մէջ Դաւիթ Բէկն ու իր հետեւորդները զէնք վերցուցին եւ պաշտպանեցին Արցախի հայկական թագաւորութիւնները: Վերջապէս Նժդեհի եւ իր զինակիցներու օրով Սիւնիքն է, որ զէնք վերցուց ու դիմադրեց պոլշեիկաթրքական արշաւանքին:

Յայտց քաղաքական պատմութեան մէջ իր կարեւոր դերէն բացի, Սիւնիքը պատմականօրէն կամուրջ եղած է տարբեր քաղաքակրթութիւններու եւ առեւտրային ուղիներու միջեւ: Պարսիկները Կովկասը վերահսկած են Սիւնիքի ազնուական այն ընտանիքներու միջոցով, որոնք նախապէս առեւտրային ցանցեր կը ստեղծէին տարբեր շրջաններու հետ: 2020-ին, Արցախեան երկրորդ պատերազմին, Յայաստանի կրած պարտութենէն ետք, Սիւնիքի հարցը կրկին կը բարձրանայ: Այս անգամ Պաքուն եւ Անգարան կ'ուզեն իրականացնել իրենց դարաւոր երազանքը՝ տարածաշրջանը ծառայեցնելով փանթուրքիստական նպատակի իրականացման:

Թէեւ 9 Նոյեմբեր 2020-ի եռակողմ յայտարարութեան իններորդ կէտին մէջ կը նշուի, որ Յայաստանը առեւտրական նկատառումներով Նախիջեանը Ազրայէյճանի Յանրապետութեան կապելու երթուղի կը տրամադրէ, սակայն չի նշուիր «միջանցք» բառը, հակառակ Պաքուի պնդումներուն, որ այս կէտը կ'արդարացնէ «Ձանգեզուրի միջանցքը»: Այս յայտարարութեան մէջ ռեւէ տեղ չի նշուիր Իրանի հետ Յայաստանի սահմանի երկայնքով միջանցք ստեղծելու մասին: «Միջանցքի» հարցով Պաքուն ոչ միայն կը խախտէ եռակողմ յայտարարութիւնը,

այլ ակնյայտօրէն կը խախտէ Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը՝ սպառնալով հայ-իրանական սահմանի տարածքային աշխարհագրութեան եւ ճանապարհ հարթելով Իրանի հիւսիսը իր փանթորքական նկրտումներուն:

2021-ի Մայիսին Ազրպէյճանը կը ներխուժէ Սիւնիք եւ կը գրաւէ ռազմավարական բլուրներ: Այս սադրիչ քայլով Ազրպէյճան գլխաւորաբար ինչի՞ կրնար հասնիլ: Հայաստանի, Ազրպէյճանի եւ Ռուսաստանի միջեւ ստորագրուած եռակողմ յայտարարութեան մէջ կը նշուի, որ Հայաստանը «փոխադրութեան ճանապարհ» պիտի տրամադրէ դէպի Ազրպէյճան (հաւանաբար Սիւնիքով), բայց այդ պիտի հսկուի ռուսական սահմանապահ զօրքերու կողմէն, իսկ Ռուսաստանը (ոչ Հայաստանը) պիտի վերահսկէ այդ ճանապարհային հաղորդակցութիւնը:

Ամիսներ առաջ իրանեան դիւանագիտական աղբիւր մը (որ խնդրած էր ինքնութիւնը չբացայայտել) ընդգծած էր, որ Ազրպէյճանի գործողութիւնները կրնան կապուած ըլլալ «հիւսիս-հարաւ միջազգային միջանցքին» Հայաստանի մասնակցութեան հետ: Աղբիւրը կը նշէր, որ յաջորդ ամիս Իրանը պաշտօնապէս բանակցութիւններ պիտի սկսի Եւրասիական տնտեսական միութեան (ԵՏՄ) հետ՝ իր լիիրաւ անդամակցութեան դիմումին ընթացք տալու համար: Հայաստանը Իրանի լիիրաւ անդամակցութեան աջակցող հիմնական բանակցողն է: Դիւանագէտը կը կարծէ, որ այս հակամարտութիւնը ուղակիօրէն կապուած է Հնդկաստանի առեւտրային միջանցքի նախաձեռնութեան հետ, ուր Նիւ Տելիի եւ Թեհրան կը խրախուսեն Երեւանը դառնալու Հնդկաստանն ու Պարսից Ծոցը Սեւ Ծովին միացնող օղակը (Վրաստանով): Ազրպէյճան գոհ չէ այս նախաձեռնութենէն եւ կրնայ ապակայունացնել Սիւնիքը եւ ողջ Հայաստանը՝ շեղելու համար Հայաստանի ուշադրութիւնը եւ Երեւանը իբրեւ ոչ վստահելի գործընկեր ցոյց տալու: Հետեւաբար, Սիւնիքը՝ Հայաստանի ողնաշարը, իր աշխարհառազմավարական դիրքով առեւտրային ճանապարհներու երկայնքով, կրնայ որոշել ոչ միայն Հայաստանի, այլ ողջ տարածաշրջանի աշխարհատնտեսական ապագան:

10 Սեպտեմբեր 2022-ին, Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարը իր բանակին կը յանձնարարէ պահպանել մարտական պատրաստականութիւնը՝ «հայկական որեւէ սադրանք ճնշելու համար»: Զարմանալի չէ, որ երեք օր անց Պաքուն Հայաստանի արեւելեան սահմանին կը սկսի լայնածաւալ յարձակում իրականացնել՝ կեդրոնանալով Զերմուկի վրայ, օգտագործելով յատուկ ջոկատներ եւ իսրայէլական ու թրքական արտադրութեան անօդաչու թռչող սարքեր, միաժամանակ հրետանային հարուածներ հասցնել ռազմական եւ քաղաքացիական կառոյցներուն: Հետեւաբար Ազրպէյճանը ռազմավարական դիրքեր գրաւած է սահմանի մօտ՝ ճնշում գործադրելով Հայաստանի հարաւային շրջանի վրայ: Այս ռազմական գործողութեան նպատակը Զերմուկ մտնելն ու Երեւանի իշխանութիւնները հերթական զիջման ենթարկելն էր: Ազրպէյճանական հրետանային հարուածներու թիրախ դարձած են նաեւ Գեղարքունիքի մարզի մէջ գտնուող ռուս սահմանապահները եւ անոնց դիրքերը: Հետաքրքրականն այն է, որ ռուսական անձնակազմը ռազմական պատասխան չէ տուած եւ անյապաղ ստիպուած եղած է լքել տեղակայման վայրը, քանի որ անոնց ռազմական սարքաւորումներն ու կառոյցները ենթարկուած են բուռն հրաձգութեան:

Ազրպէյճանը իր վայրագութիւնը արդարացուց մեղադրելով Երեւանը՝ խաղաղութեան պայմանագիրը ստորագրելէ հրաժարելու մէջ, ինչ որ պիտի ճանչնար իր «տարածքային ամբողջականութիւնը» (ուր ներկայիս տեղակայուած են ռուս խաղաղապահներ, որպէս Ազրպէյճանի մաս) եւ «միջանցք» պիտի ապահովէր հարաւային կողմէ՝ Ազրպէյճանը Նախիջեւանին միացնելով: Սանդղայարձակման հետեւանքով զոհուեցան աւելի քան 300 հայ զինուորներ:

Աշխարհատնտեսական մրցակցութիւնը և «միջանցքներու» ճակատամարտը

12 Դեկտեմբերին, բնապահպանութեան պատրուակով, Ազրպէյճանի պետութեան աջակցող տասնեակ «բնապահպաններ» կը փակեն Ստեփանակերտ-Ճուլի հատուածի մէջ Հայաստանը Արցախին կապող միակ ցամաքային միջանցքը: Ինչպէս եւ սպասելի էր, շրջափակման միջոցով շուտով «բնապահպանական» կարգախօսները կը քաղաքականացուին եւ քաղաքական պահանջներ կը բարձրանան: Արցախի մէջ ապրող 120 հազար հայերու համար մարդկային աղէտ կը ստեղծուի... Խորքին մէջ հարցը այն է, թէ ինչո՞ւ եւ ի՞նչ արկածախնդրութեամբ Ազրպէյճան գնաց նման սադրանքի: Վերլուծելով Ազրպէյճանական լրատուամիջոցները ապա կարելի է պնդել, որ ներկայիս մարդասիրական ճգնաժամը շատ ակնհայտ է, քան Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը եւ այդ կապուած է «միջանցքներու ճակատամարտի»ն հետ եւ ակելին:

Լաչինի միջանցքի շրջափակումը մեզի համար պէտք է զարմանալի չըլլայ, քանի որ նման վարկածներ արդէն կը քննարկուէին Ազրպէյճանական լրատուամիջոցներու կողմէ: Միակ անակնկալը եղած է ճգնաժամը լուծելու Ռուսաստանի անկարողութիւնը: Ծաբաթներ առաջ Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Հուլուսի Աքարը Իրանի սահմանի մօտ Ազրպէյճանի հետ համատեղ զօրավարութիւններու ժամանակ Հայաստանին կոչ ըրած էր «օգտուիլ հնարաւորութենէն եւ դրականօրէն արձագանգել Թուրքիոյ եւ Ազրպէյճանի խաղաղութեան կոչերուն»: Մեկնաբանելով այսպէս կոչուած «Զանգեզուրի միջանցքը» Աքար ըսած է. «Մեր անկեղծ ցանկութիւնն է տարածաշրջանի մէջ վերականգնել երկաթուղին եւ կապերը, յատկապէս Զանգեզուրի միջանցքի բացումը, սկսիլ տնտեսական գործունէութիւն եւ ողջ տարածաշրջանի մէջ ապահովել համապարփակ կարգաւորում, ներառեալ Ազրպէյճան-Հայաստան եւ Թուրքիա-Հայաստան յարաբերութիւնները»: Թուրքիոյ պաշտպանութեան նախարարը ըսած է, որ Թուրքիան կը խոստանայ շարունակել աջակցիլ Ազրպէյճանի ընդդէմ Հայաստանի «արդար գործին»:

Թուրքիան առաջ կը մղէ միջանցքի հարցը, քանի որ անիկա զգալիօրէն պիտի հզօրացնէ իր «Միջին միջանցք» նախագիծը եւ անոր դերը Չինաստանի «Գօտի եւ ճանապարհ» նախաձեռնութեան մէջ (BRI) Իրանի «Հիւսիս-Հարաւ միջանցքի» նկատմամբ, որ նախատեսուած է վերացնելու Թեհրանի եւ Մոսկուայի մեկուսացումը, ինչպէս նաեւ հզօրացնելու Իրանի յարաբերութիւնները Ռուսաստանի եւ Հնդկաստանի հետ:

Ազրպէյճանցիներու կողմէն կազմակերպուած բողոքի ցոյցերու եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակման երկրորդ օրը, Ազրպէյճանական լրատուամիջոցները յստակ յայտնած էին իրենց մտադրութիւնները: Ազրպէյճանական լրատուամիջոցներն ու ցուցարարները սկսած են պահանջել Արցախի մէջ ռուսական խաղաղապահ առաքելութեան հրամանատար Անդրէյ Վոլկովի փոխարինումը, ինչպէս նաեւ խնդրած են ապահովել Լաչինի միջանցքի վերահսկողութիւնը եւ «խաղաղապահներու վերահսկողութեան տակ գտնուող տարածքներու մէջ Ազրպէյճանական ինքնիշխանութեան ամբողջական վերականգնումը»:

News.am-ը յղում կատարելով Ազրպէյճանական Haqqin.az-ին, կը նշէ, որ «Ազրպէյճանական ակտիւիստները» «վճռական են կանխելու նախկին ձեռաչափով Բերձորի (Լաչինի) միջանցքի աշխատանքը եւ պիտի շարունակեն գործողութիւնները այնքան ժամանակ, քանի դեռ ճանապարհի հսկողութիւնը չէ ապահովուած Պաքուի կողմէն»: Հետաքրքրական է, որ որոշ Ազրպէյճանցի ակտիւիստներ նոյնպէս միամտաբար խնդրած են հեռացնել ռուսական ուժերը եւ փոխարինել ՄԱԿ-ի հովանաւորութեամբ:

Արդեօք Ազրպէյճանը պատրամստ է ռիսքի դիմել եւ խնդրել ռուսական խաղաղապահ ուժերու հեռացումը եւ փոխարինումը միջազգային խաղաղապահ ուժերով: Ազրպէյճանցի քանի մը փորձագէտներու կարծիքով, ներկայիս Պաքուն դէմ է ռուսական զօրքը ուժով դուրս հանելուն, քանի որ Լեռնային Ղարաբաղի բռնակցումը եւ հայերու էթնիկ զտումները կը վատթարացնեն Արեւմուտքի մէջ նախագահ Իլհամ Ալիեւի հեղինակութիւնը: Ազրպէյճանը մտավախութիւն ունի, որ նման գործողութիւն պիտի ստիպէ ԵՄ-ին եւ ԱՄՆ-ին տնտեսական

պատժամիջոցներ կիրառել: Առայժմ Պաքուն կը նախընտրէ ռուսերուն մնալը, բայց վերահսկողութեան տակ: Ազրպէյճանի համար, ինչպէս կը պնդէր փորձագէտներէն մէկը, շատ անելի հեշտ է գործ ունենալ թոյլ Ռուսաստանի, քան եւրոպացիներու հետ, որովհետեւ Պաքուն ծանօթ է «ռուսական մտածելակերպին»: Ազրպէյճանցի փորձագէտներէն մէկը, ռուսերուն ակնարկելով կ'ըսէ. «մանրէն երբ լիարժէք վիճակի մէջ է՝ շատ վտանգաւոր է, բայց երբ գայն կ'իսով չափ կ'ոչնչացնես, անիկա կը վերածուի պատուաստանիւթի»: Պաքուն կը նախընտրէ թոյլ եւ «լաւ մանրէն», որ կրնայ բարձրացնել Ազրպէյճանի անձեռնմխելիութիւնը եւ ամրապնդել Ազրպէյճանցիներու վրայ Ալիեւի վերահսկողութիւնը:

Պաքուն նպատակ ունենալով վերահսկել ռուսական զօրքերու գործունէութիւնը՝ կը ձգտի ոչ թէ ռուսերը դուրս մղել կամ փոխարինել, այլ վերահսկել անոնց առաքելութիւնը, վերահսկել Բերձորի (Լաչինի) միջանցքի մէջ թրանզիթը եւ օգտագործել միջանցքը՝ ճնշում գործադրելու Երեւանի վրայ, Սիւնիքի մէջ բանալու «միջանցք», որ պիտի կապէ Ազրպէյճանը Թուրքիային: Պաքուի տեսանկիւնէն այսուհետ Բերձորի (Լաչինի) միջանցքի ճակատագիրը կապուած է «Զանգեզուրի միջանցքի» բացման եւ ապագայ կարգավիճակի հետ:

Շրջապատել Իրանը և անելին...

Արցախեան երկրորդ պատերազմէն ետք Իրանը ինքզինք տարածաշրջանէն մեկուսացուած կը զգար: Անոր բացակայութիւնը սակայն երկար չտևեց: Իպրահիմ Ռահսիի նախագահ ընտրուելով Թեհրանը Հարաւային Կովկասի մէջ որդեգրեց արտաքին գործօն քաղաքականութիւն՝ ապահովելով աշխարհատնտեսական եւ աշխարհաքաղաքական շահերը: Այսպէս կոչուած Զանգեզուրի միջանցքը սպառնալիք էր Իրանի ազգային անվտանգութեան համար, քանի որ ան նպատակ ուներ շրջանցել ոչ միայն իրանական տարածքը եւ թոյլ չտալ Իրանին տարանցման վճարներ ստանալ Ազրպէյճանական բեռնատարներէն, այլեւ կը պատրաստուէր միջազգային սահմաններ բանալ Իրանի եւ Հայաստանի միջեւ:

Իրան-Հայաստան սահմանը քանդելու թուրքազրպէյճանական նախագիծը նպատակ ունի Իրանը զրկել Թուրքիայէն Կեդրոնական

Ասիա եւ Աֆղանստան արտահանուող ապրանքներու տարանցիկ եկամուտէն: Իրանը մտահոգուած է, որ ապագային Թուրքիան կրնայ այդ մէկը դիտել որպէս Թուրքիոյ տարածքով իրանական ապրանքներու արտահանման համար որոշակի խոչընդոտներ ստեղծելու հնարաւորութիւն: Հայաստանի հետ սահմանի կորուստով Եւրոպայի եւ Եւրասիայի հետ Իրանի առեւտրային ուղիները կը յայտնուին Թուրքիոյ եւ Ազրպէյճանի առեւտրային ուղիներու ողորմութեան տակ: Հետեւաբար Անգարայի եւ Պաքուի տնտեսական եւ քաղաքական լծակները Թեհրանի վրայ կը մեծնան Իրանի հիւսիսը, ճանապարհ հարթելով փանթուրքիստական անջատողական շարժումներու համար:

Այդ իսկ պատճառով Իրանը պէտք է խաղայ իր խաղաքարտերը եւ իր շահերը ապահովելու համարներգրաւէ եւ Ազրպէյճանը, եւ Հայաստանը: Թեհրանը մէկ կողմէն Ազրպէյճանի հետ խթանեց երկաթուղիի կառուցումը՝ Ռուսաստանի հետ կապ հաստատելու համար, իսկ միւս կողմէն սկսաւ մեծցնել Հայաստանի հետ առեւտրի, ուժանիւթի եւ հաղորդակցութեան նախագիծերը: Այլընտրանքային «միջանցքի» շուրջ Իրանի ներգրաւուածութիւնը Ազրպէյճանի հետ բարձրացուց Հայաստանի վրայ ռազմական եւ քաղաքական ճնշումը կապուած Սիւնիքի վրայ Ազրպէյճանական սպառնալիքի հետ, բայց միեւնոյն ժամանակ առայժման Հայաստանը մեկուսացուց տարածաշրջանային հաղորդակցութեան եւ առեւտրային նախագիծերէն:

Մինչ Ազրպէյճանը 2022 թուականի Սեպտեմբերին անելի շատ կը ճնշէր Հայաստանի վրայ՝ հարաւի մէջ գրաւելով ռազմավարական բլուրներ, Իրանը Ազրպէյճանի եւ Հայաստանի հետ իր սահմաններուն վրայ զօրքեր եւ ծանր զինատեսակներ կը տեղակայէր: Իրանի նախագահը հեռաձայնեց Հայաստանի Վարչապետին եւ կրկնեց, որ «Իրանի կապը Հայաստանի հետ պէտք է վտանգի չենթարկուի եւ կապի ուղիները պէտք է ըլլան պետութիւններու ինքնիշխանութեան ներքոյ»: Քանի մը օր անց Իսլամական Խորհրդարանի Ազգային անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան յանձնաժողովի ղեկավար Ուահիտ Ջալալզատին զգուշացուց, որ «Իրանը տարածաշրջանի սահմանները փոխելու երազանքը մղձաւանջի պիտի վերածէ»:

Բացի կոշտ ուժէն, Իրանը կիրառեց նաեւ իր փափուկ ուժը եւ հիւպատոսութիւն բացաւ Սիւնիքի Կապան քաղաքի մէջ: Տնտեսական առումով, ըստ իրանական Fars News գործակալութեան, 15 Մայիսի 2022-ին Իրան-Յայաստան առեւտուրի միացեալ պալատի նախագահ Յերուիկ Եարիջանեանը ըսած է, որ Մեղրիի ազատ առեւտուրի գօտին շուտով պիտի բացուի Իրանի հիւսիս-արեւմտեան Արասի շրջանի մէջ, ինչը կրնայ Իրանի եւ Յայաստանի միջեւ առեւտրաշրջանառութեան ծաւալը մեծցնել՝ հասցնելով մինչեւ մէկ միլիարտ տոլարի: Երկու կողմերը նաեւ բանակցութիւններ կը վարեն ներդրումներ ձեռք բերելով՝ «հիւսիս-հարաւ» փոխադրամիջոցային միջանցքի մէջ, որ Յայաստանը Իրանի միջոցով պիտի կապէ Պարսից ծոցին:

Նոյն այս համայնապատկերին մէջ էր, որ Յնդկաստանը միացաւ Իրանին եւ կոշտ դիւանագիտական ուղերձ յղեց Ազրպէյճանին ու սկսաւ զինել Յայաստանը: Յնդկական տեսանկիւնէն Յայաստանի հարաւային կողմը որեւէ ռազմական հակամարտութիւն կրնայ սպառնալ հիւսիս-հարաւ միջազգային տեղափոխման միջանցքի անվտանգութեան, զոր էն Յնդկաստանը, էն Իրանը կը խրախուսեն, որ Յայաստանը կամրջող դեր խաղայ Պարսից Ծոցը Սեւ Ծովին կապելով:

Գնահատում և արտացոլում

Սիւնիքի ուղղութեամբ Ազրպէյճանական սահմանային ոտնձգութիւնը եւ «Լաչինի միջանցքի» շրջափակումը բոլորովին պէտք չէ զարմացնէ մեզ: Վերջին սանդղայարձակման զարգացումներուն մէջ կը մտնեն.

- ա. Ազրպէյճանի նախագահ Իլիհամ Ալիեւի սպառնալիքները՝ արցախեան պատերազմէն ետք Սիւնիքով «միջանցք» ստիպողաբար բանալու գծով:
- բ. Ազրպէյճանական լրատուամիջոցներու դերը «Զանգեզուրի միջանցքի գործի» համար իր ժողովուրդը ռազմականացնելու մէջ:
- գ. Զանգեզուրը «Ազրպէյճանական նախնիներու հող» ըլլալու մասին պատմութեան տարածումը:

Յատկանշական է, որ որոշ Ազրպէյճանցի պատգամաւորներ Ազրպէյճանական լրատուամիջոցներով եւ ոչ պաշտօնական կոչ ըրած են Յայաստանի տարածքի մէջ «անվտանգութեան գօտիներ» եւ «մեկուսացած գօտիներ» ստեղծել: Նման դիտողութիւններ պէտք է անտեսուին: Այս բոլորի հիմնական նպատակն է զինաթափել հայկական բանակը եւ նպաստել Սիւնիքի մէջ «միջանցքի» ստեղծման:

Ազրպէյճանը խաղալով «Բերձորի միջանցքի» խաղաքարտը կը ձգտի մեկուսացնել Յայաստանը եւ անոր պարտադրել նուաստացուցիչ պայմանագիր: Բացի ռազմական գործողութիւններէն եւ շրջափակումէն Պաքուն նաեւ հոգեբանական եւ քաղաքական ճնշում կը գործադրէ: 19 Սեպտեմբեր 2002-ին խումբ մը Ազրպէյճանցի քաղաքական գործիչներ եւ «մտաւորականներ» Անգարայի մէջ յայտարարեցին Նոր «Գոյշա-Զանգեզուր թրջական հանրապետութեան» ստեղծման մասին: Անգարայի մէջ արդէն ներկայացուցչութիւն բացուած է, ներկայացուած է նաեւ դրօշ: Այսպէս կոչուած «Գոյշա-Զանգեզուր» թրջական հանրապետութիւնը կ'ընդգրկէ Յայաստանի հարաւային եւ արեւելեան հատուածները:

Կ'եզրակացնենք, որ անհրաժեշտ է Յայաստանը ունենայ իր գոյատեւման տեսլականը: Իր կանխարգելիչ կարողութիւնները զօրացնելու համար ան պէտք է փնտռէ ռազմական եւ ոչ թէ բարոյական աջակցութիւն ու դատարկ խոստումներ:

Յայաստանը կրկին յայտնուած է մեծ տիրութիւններու մրցակցութեան խաչմերուկին վրայ: Ան միակ բնական պատնէ փանթորքիստական նախագիծի դէմ: Եթէ հիմա չդադրեցուին Ալիեւի եւ Էրտողանի տարածաշրջանային յաւակնութիւնները, ապագային կրակը պիտի ընդլայնուի դէպի հարեւան երկիրներ:


Հայաստան և Արցախ



2020թ
Պատերազմին
առաջ



Ներկայիս



ԳԱՐԵԳԻՆ ՆԺՂԵՅԻ ԽՕՍՔԵՐԷՆ



Գարեգին Նժդեհի Խօսքերէն

«Ոչ մի տեղ առանց Սիւնիքի ու Արցախի: Առանց աշխարհագրական Հայաստանի, այդ հզօր ողևաշարի, մեր ամբողջական հայրենիքը գոյութիւն ունենալ չի կարող»:

«Սուր եւ գրիչ, աստուածային զէնքեր տրուած մարդուն՝ պաշտպանելու իրաւունքն ու սրբութիւնն աշխարհում...: Չպարտուեց, գետին չինկաւ եւ իմ սուրը...»

«Ի՞նչ, հայ երիտասարդութիւն, մեռելի ականջին է հնչում իմ խօսքը: Ո՛չ, ես հաւատում եմ քո ներքին վերանորոգիչ ուժին, ինչպէս եւ քո ջախել թելերի թափին»:

«Ժողովուրդ, քո պատմութեան բոլոր դարերի անունով երդուեցնում եմ սերունդներիդ. Չներել թուրքին, անգամ եթէ մի օր նրան տեսնես անկեալի վիճակում: Այո, ներում են թշնամուն, բայց ո՛չ եւ իր կէսի սպանիչին, ո՛չ եւ նրան, որ մի օր փորձեց գոյութեան գրքից քո անունը սրբել»:

«Մեռի՛ր այնպէս, որ մահդ էլ ծառայի Հայրենիքիդ»:

«Դաշնակցական եմ եւ ահա հայրենի երկիրս ու հայութիւնը շունչէս ւաւելի մօտ են ինձ: Եւ արդէն կը զգամ թէ սովորական զգացումներէն զատ ունիմ նաեւ Հայաստանի զգացումը, որ ինձ հետ ծնուած չէր եւ զոր սակայն Դաշնակցութիւնը տուաւ ինձ»:

«Առանց նուիրումի չկայ բարձր ստեղծագործութիւն, իսկ նուիրումի գաղափարը հայութեան համար հոգեբանութիւն դարձաւ Դաշնակցութեան մարտիրոսագրութեան ու հերոսականի շնորհիւ: Այդ է պատճառը, որ Դաշնակցութիւնը, իբր ցեղի ներքին հոգեկան կարողութիւն, չի խորտակուում անգամ ներքին պարտութիւնների դէպքում: Նա մնում է իր ստեղծագործ ապագային հաւատացող իտէալիստ հայութեան հոգեւոր կորիզը»:

«Ոչինչ, ոչինչ է այնքան խոր, որքան տառապանքը գոհաբերողի, որ գոհաբերում է իր նմանների համար եւ մնում չհասկացուած»:

«Յարուստ է Սիւնեաց աշխարհը հինաւորց վանքերով ու բերդերով՝ կիսաւեր ու փլատակ սրբավայրեր, որոնք դարեր շարունակ թուրքի համար ախոռի եւ դարմանանոցի տեղ կը ծառայէին: Այս պարագան, որն իմ ուշադրութիւնը գրաւել էր Սիւնիք մտածս հէնց առաջին օրերից, ինձ հնարաւորութիւն ընձեռեց իմ վարած ռազմագործողութիւններին տալ Խաչակրաց արշաւանքի բնոյթ: Իմ զինուորը սրբազան դողով կը նայէր հեքիաթական Գեղուածորի դուռը փակող Բաղաբերդին, երբ Նրա ճակատը կը խոնարհուէր եւ շրթունքները կը շօշափէին իր փլատակների մէջ այնքան վեհ բերդի քարերը: Իմ զինուորը չէր կարող այլեւս անտարբեր անցնել իր երկրի պատմական յիշատակների մօտով»:

**Yerevan
2023**